

ԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԵԾ ՆՎԻՐՅԱԼԸ

(Հրաչ Բարթիկյանի ծննդյան 80-ամյակի առթիվ)

ՀՀ ԳԱԱ անդամ, բյուզանդագետ, արևելագետ, պատմաբան, հայագետ, բանասեր, թարգմանիչ, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի Միջին դարերի պատմության բաժնի վարիչ Հրաչ Բարթիկյանը մեծ ներդրում ունի գիտության մեջ: Հ. Բարթիկյանի մտքի դրսևորումները, գիտական բարեխղճությամբ կատարված հետազոտությունները եղել և մնում են գիտական լայն շրջանառության ու գնահատման գործընթացում:



Հետաքրքիր ու գիտական մեծ նվաճումներով հարուստ ուղի է անցել գիտնականը. նրա կյանքի ընթացքի բոլոր շրջափուլերը նախանշված են եղել հայրենական գիտության ծաղկմանը նպաստելու, միջազգային գիտությանը համաքայլ ընթանալու իրողությամբ: Եթե նրա երջանկահիշատակ հայրը՝ բանասեր-հրապարակախոս Միքայել Բարթիկյանը, կենդանի լիներ, ապա հպարտությամբ իր որդուն կասեր. «Դու քո կյանքում ձեռք բե-

րեցիր այն, ինչ ես երագում էի...»:

Հ. Բարթիկյանը նախնական կրթությունը ստացել է Աթենքի հայկական ու հունական դպրոցներում, 1945-ին ավարտել հունական գիմնազիա: 1946-ին նրանց ընտանիքը ներգաղթել է Հայաստան:

Սովորել և 1953-ին ավարտել է Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետը՝ գերագանցության դիպլոմով: Այնուհետև կրթվել է գիտական մեկ այլ կարևոր միջավայրում՝ Լենինգրադի Արևելագիտության ինստիտուտի ասպիրանտուրայում, ուր նրա գիտական ղեկավարն է եղել հռչակավոր ակադեմիկոս Հովսեփ Օրբելին: 1958-ին Լենինգրադում պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն «Պավլիկյան շարժման պատմության ուսումնասիրության աղբյուրները» թեմայով. այն որպես մենագրություն 1961-ին ռուսերեն լույս է տեսել Երևանում:

1971-ին «Բյուզանդական Դիզենիս Ակրիտաս էպոսը և նրա նշանակությունը հայագիտության համար» թեմայով պաշտպանել է դոկտորական ատենախոսություն: Ահա այս մանրակրկիտ, նորափաստ ու նորադրույթ ուսումնասիրությունը հետագայում կցվեց Հ. Բարթիկյանի «Վասիլ Դիզենիս Ակրիտաս» էպոսի հայերեն թարգմանությանը, որը լույս տեսավ Երևանում 1978-ին՝ լրացնելով հայերեն լույս տե-

սած՝ աշխարհի էպոսների այնքան կարևոր հավաքածուն: Քաջածանոթ լինելով բյուզանդական պատմական իրականությանը՝ Հ. Բարթիկյանն իր հմուտ ուսումնասիրության և ծանոթագրությունների մեջ համոզիչ մատնացույց է անում համաշխարհային բանագիտության նշանավոր երկի հայկական գրեթե բոլոր հիմքերն ու աղերսները: Նա ստեղծագործաբար շարունակում է Ն. Ադոնցի, Ա. Սիրկինի, Ա. Գրեգուարի՝ բյուզանդական էպոսի մեկնաբանման գործը. «Ինչ վերաբերում է բյուզանդական էպոսի ստեղծողների ազգային պատկանելության հարցին, ապա սկզբնաղբյուրների հիման վրա ցույց տրվեց, որ հայ ժողովուրդը որոշակի նպաստ ունի «Դիգենիս Ակրիտասի» լույս աշխարհ գալուն: Մասնագետ հետազոտողը ինչ տեսանկյունից էլ մոտենա էպոսին, ինչպիսի համոզմունքներով էլ նա առաջնորդվի «Դիգենիս Ակրիտասի» սոցիալական ու էթնիկական հողը պարզելու գործում, նա չի կարող ուրանալ, չի կարող անտեսել մի կարևոր հանգամանք, այն, որ «Դիգենիս Ակրիտասը» ծնունդ առավ Արևմտյան Հայաստանում և այնպիսի մի ժամանակ, երբ այդ երկրամասի բնակչությունը գերազանցապես հայեր էին»¹:

Հ. Բարթիկյանի մուտքը գիտության աշխարհ շատ խոստումնալից էր, իսկ ընթացքը առավել քան արգասաբեր: Նա շուրջ 20 գրքերի և բազմաթիվ հոդվածների հեղինակ է: ՀՀ ԳԱԱ հրատարակչության մատենաշարը՝ «Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, բյուզանդական աղբյուրներ» խորագրով հարստացել է անվանի գիտնականի հիանալի թարգմանություններով՝ Պրոկոպիոս Կեսարացի (1967), Կոստանդին Ծիրանածին (1970), Հովհաննես Սկիլիցես (1979), Թեոփանես Խոստովանող (1983), Թեոփանեսի Շարունակող (1990):

1973-ին Հ. Բարթիկյանի թագմանությամբ լույս տեսավ հայ միջնադարյան մատենագիրներից Մատթեոս Ուռհայեցու «Ժամանակագրությունը», որը դեռևս 1858-ին Էդուարդ Դյուլոբրիեն թարգմանել էր ֆրանսերեն²՝ այն հայտնի դարձնելով եվրոպական հայագիտական շրջաններին: Այս պատմությունը բացառիկ է խաչակրաց արշավանքներն ուսումնասիրելու, ինչպես նաև 1144-ին Ջանգի ամիրայի կողմից Եդեսիան գրավելու պատմությունը քննելու առումով: Հ. Բարթիկյանը բնագրի հմայքն ու հարազատությունը պահպանելու նպատակով աշխարհաբար թարգմանության մեջ ավելի քան հավատարիմ է մնացել հեղինակի ոճական առանձնահատկություններին և անփոփոխ է թողել հատուկ անունների ու օտար բառերի բնագրային գրության ձևերը: Մի առանձին հետաքրքրություն ունի գիտնականի՝ հունարենից թարգմանած Պրոկոպիոս Կեսարացու «Գաղտնի պատմություն» երկը: Այդ երկը միջազգային տարածում ունի: Այն բնագրով և թարգմանաբար լույս է տեսել շուրջ երեսուն անգամ: Թարգմանվել է լատիներեն, ֆրանսերեն, անգլերեն, գերմաներեն, իտալերեն, ռուսերեն, նոր հունարեն: Հատվածաբար թարգմանվել է վրացերեն, չեխերեն, բուլղարերեն, սերբերեն, լեհերեն, ռումիներեն,

¹ Վասիլ Դիգենիս Ակրիտաս, թարգմանություն, ուսումնասիրություն, ծանոթագրությունները Հրաչ Բարթիկյանի, Երևան, 1978, էջ 186:

² *Sté u Bibliothèque historique Arménienne, Paris, 1858.*

հունգարերեն: *Հ. Բարթիկյանն իրականացրել է երկի առաջին ամբողջական հայերեն թարգմանությունը, որն առաջինն է նաև ոչ եվրոպական լեզուների մեջ*³:

Այս կարգի թարգմանություններն անգին գանձ են հայ պատմավիպասանների համար, որովհետև դրանցում առավել չափով նկարագրված են բյուզանդական արքունիքի ներքին կյանքի մանրամասներ, որոնք, ինչպես պատմավիպասան Բաֆֆին է ասում, չենք գտնում հայ պատմիչների մոտ: Պատմական գոյության ողջ ժամանակահատվածում Հայաստանի ազնվականությունն ու բյուզանդական արքունիքը սերտ կապերի մեջ էին, էլ չենք ասում, թե որքան մեծ թվով հայազգի ազնվականներ դարձան բյուզանդական կայսրեր և ծաղկեցրին այդ աշխարհակալ պետությունը: Այս առումով Հ. Բարթիկյանի թարգմանությունները, ծանոթագրությունները, մեկնաբանությունները հայ ընթերցողի համար ստանում են սկզբնաղբյուրային արժեք:

2005 թ. ֆրանսերենից հայերեն է թարգմանվել նշանավոր բյուզանդագետ Շառլ Դիլի «Բյուզանդիայի պատմության հիմնախնդիրները» ծավալուն երկը (թարգմանիչ՝ Շուշան Մակարյան)⁴: Այս գիրքը մեծապես շահել է, որովհետև նրա խմբագիրը, առաջաբանի ու ծանոթագրությունների հեղինակը Հ. Բարթիկյանն է, որը մեզանում այդ բնագավառի լավագույն գիտակն է: Գիրքը Շառլ Դիլի վերջին աշխատությունն է, որը բյուզանդագետը թելադրել է կուրացած վիճակում: Նա նյութին տիրապետում էր կատարելապես և կարող էր նման քայլի դիմել: Արդյունքում, ինչպես Հ. Բարթիկյանն է համոզիչ ձևով հիմնավորում, ստացվել է շատ կարևոր աշխատություն. «Շ.Դիլը իր սույն աշխատությամբ (ինչպես և իրենից առաջ իր հայրենակից Լ. Բրեյեն) նպատակ է դրել ժխտելու այն սխալ պատկերացումը, որ գոյություն ունեւր գիտության մեջ Բյուզանդիայի վերաբերյալ սկսած դեռևս Վոլտերից, Մոնտեսքյոյից, Գիբբոնից և Լըբոյից, երբ այն ներկայացվում էր որպես Հռոմեական կայսրության անկման շրջան: Նա վերհանում է այն կարևոր դերը, որ խաղացել է Բյուզանդիան միջին դարերի պատմության մեջ»⁵:

Իր առաջաբանում Հ. Բարթիկյանը լրացնում է այն բացերը, որոնք կան Շ.Դիլի աշխատության մեջ՝ հայ-բյուզանդական փոխառնությունները ներկայացնելիս: Նա նաև ծանրանում է գրքի՝ Հայաստանին, հայ ազնվականներին և առհասարակ հայ ժողովրդին ներկայացնող անկողմնակալ հատվածների վրա. «Բյուզանդիան Հայաստանին է պարտական բազում լավագույն գորավարների, արտակարգ կառավարիչների, մինչև անգամ շատ կայսրերի համար. նրանցից էին՝ Հերակլիոսը VII դարում, Լևոն Հայկազնը IX դարում, Ռոմանոս Լակապենոսը և Հովհաննես Չմշկիկը X դարում: Չպետք է մոռանալ նաև հայազգի հրաշալի զինվորներին: X դ. հայկական զնդերը կայսրության լավագույն գորավարներին էին»⁶: Հ. Բար-

³ Պրոկոպիոս Կեսարացի. Գաղտնի պատմություն, թարգմանություն հին հունարեն բնագրից, առաջաբանը և ծանոթագրությունները Աթենքի ակադեմիայի թղթակից անդամ Հրաչ Բարթիկյանի, Երևան, 1987, էջ 27:

⁴ Տե՛ս Շառլ Դիլ. Բյուզանդիայի պատմության հիմնախնդիրները, Երևան, 2005:

⁵ Նույն տեղում, էջ XVIII:

⁶ Նույն տեղում, էջ 134:

թիկյանը ցավով նշում է, որ Շ. Դիլը իր գրքում լիովին անտեսել է հայ միջնադարյան պատմիչների բյուզանդական կայսրության վերաբերյալ հաղորդած բացառիկ փաստերը, որոնք արդեն ֆրանսերեն թարգմանված կային այնպիսի նշանավոր ֆրանսիացի հայագետների կողմից, ինչպիսիք էին Մեն-Մարտենը, Վ. Լանգլուան, Մ. Ֆ. Բրոսսեն, Էդ. Դյուլորիեն, Ֆ. Մակլերը և ուրիշներ⁷: Մեծարժեք են այն դիտարկումները, որ հայ գիտնականը կատարում է Շառլ Դիլի՝ Բյուզանդական կայսրության Հայաստանի նկատմամբ ունեցած հարաբերությունների միայն լուսավոր էջերը մատնանշելով՝ մոռանալով նաև կայսրության բազում մեղանշումները, հալածանքները՝ ուղղված հայ ժողովրդի և հայ պետականության դեմ: Հայ բյուզանդագետն իրավացիորեն եզրահանգում է. «Ահա հայ-բյուզանդական հարաբերությունների հազարամյա պատմության սեղմ ուրվագիծը: Այս բոլորից հետո հայ ընթերցողին պարզ է դառնում, թե ինչ նշանակություն ունի Շառլ Դիլի խնդրո առարկա աշխատության հայերեն թարգմանությունը»⁸:

2006-ին, որպես Մեսրոպ արք. Աշխյանի մատենաշարի 19-րդ գիրք, Երևանում լույս տեսավ Հ. Բարթիկյանի «Հայ-բյուզանդական հետազոտությունների» երրորդ հատորը, որը շարունակությունն է Երևանի պետական համալսարանի Աստվածաբանության ֆակուլտետի երջանկահիշատակ դեկան Շահե արքեպիսկոպոս Աճեմյանի «արդեամբ եւ ծախիւք» հրատարակված նույն շարքի առաջին ու երկրորդ հատորների, որոնց մեջ ընդգրկված էին գիտնականի 131 ընտիր հոդվածները՝ լույս տեսած հինգ լեզուներով (հայերեն, ռուսերեն, հունարեն, ֆրանսերեն և անգլերեն), հրատարակված մեկ տասնյակ երկրներում և երկու տասնյակ հրատարակչություններում: Այդ շարքի երրորդ հատորն ընդգրկում է կարևոր հոդվածներ (132-141), որոնք նոր լույս են սփռում հայ ժողովրդի պատմության անհայտ ու կնճռոտ շատ հիմնահարցերի վրա:

Ի դեպ, Հայաստանի գիտական միտքը ըստ արժանվույն գնահատեց երկհատորյակը և 2004-ին այն արժանացավ Հայաստանի Հանրապետության նախագահի մրցանակին՝ «Մարդկության զարգացման և հումանիստական արժեքների, այդ թվում՝ հումանիտար գիտությունների զարգացման բնագավառում ձեռք բերված նվաճումների համար»: «Գրական թերթը» ջերմորեն ողջունեց Հայաստանի գրողների միության երևելի անդամի այդ փայլուն հաղթանակը:

Հ. Բարթիկյանը երկար տարիներ է, ինչ մշտական հեղինակ է Հայաստանի կարևոր գիտական պարբերականների՝ «Պատմա-բանասիրական հանդես», «Լրաբեր հասարակական գիտությունների», «Բանբեր Երևանի համալսարանի», «Էջմիածին», «Բանբեր մատենադարանի» և այլն: Նա թղթակցում է նաև բազմաթիվ արտասահմանյան պարբերականների: Մշտապես հանդես է եկել ֆրանսերեն լույս տեսնող Revue des Etudes Arméniennes պարբերականում (t. II, 1965, t. III, 1965, t. V, 1968, t. VI, 1969, t. VIII, 1971, t. IX, 1972), Revue des Etudes Georgiennes et Caucasiennes, № 3, 1987, Serie Byzantine Sorbonnes, № 12, Paris, 1996, անգլերեն՝

⁷ Նույն տեղում, էջ XXVIII:

⁸ Նույն տեղում, էջ XIV:

Armenian studies, Etudes Arméniennes, Galoust Gulbenkian Fondation, Lisboa, 1986, Centre for Hellenic studies, King's College, London, 1993 և այլն: Շատ կարևոր է, որ նրա հոդվածներից 18-ը լույս են տեսել հունարեն: Հ. Բարթիկյանի բյուզանդագիտական ու հայագիտական հետազոտություններն անպայմանորեն նպաստում են միջազգային հայագիտության զարգացմանը և իրենցում պարունակած փաստերով հստակորեն ու անվերապահ համոզվածությամբ բանախոսում և ընդդիմախոսում են բոլոր նրանց, ովքեր միտումնավոր անտեսում են հայ մշակույթի, հայագգի գործիչների, հայ մատենագրության որոշակի և անուրանալի ավանդը մարդկային համընդհանուր պատմության ձեռքբերումների մեջ:

Հ. Բարթիկյանի գիտական վաստակը գնահատվել է ըստ արժանվույն Հայաստանում և նրա սահմաններից դուրս: 1980-ին ընտրվել է Աթենքի ակադեմիայի, 1987-ին Հռոմի «Տիրերինա» արվեստի, գրականության և գիտության ակադեմիայի, 1990-ին Հայաստանի ԳԱԱ թղթակից անդամ, իսկ 1996-ին իսկական անդամ: 1981-ին ընտրվել է Հայաստանի բյուզանդական հետազոտությունների ընկերության, սպա Հունական քաղաքակրթության հաստատության պատվավոր անդամ, արժանացել է ՀՀ ԳԱԱ «Մեսրոպ Մաշտոց» մրցանակի, Սալոնիկի Արիստոտելյան համալսարանի Արիստոտելի անվան մեդալի:

Դեռևս երիտասարդ տարիներին նա իր ծանրակշիռ խոսքն է ասել նշանավոր գիտնականների վաստակին նվիրված հայտնի ժողովածուներում:

1960-ական թվականներից ի վեր նա հոբելյանական մի շարք հոդվածներ է տպագրել ԽՍՀՄ ԳԱ գիտական հանդեսներում ու ժողովածուներում՝ նվիրված Ն. Վ. Պիգուլևսկայային, Բ. Բ. Պիատրովսկուն և այլն:

Հոբելյանական հոդվածի սահմաններում հնարավոր չէ ընդգրկել Հրաչ Բարթիկյանի գիտական վաստակի բոլոր դրսևորումները. դրանք գալիքում պետք է դառնան հատուկ մենագրական ուսումնասիրություն:

Մեծ է գիտնականի դերը Հայաստանի գիտական կադրեր պատրաստելու ուղղությամբ. նա ղեկավարել է բազմաթիվ ասպիրանտների, որոնք հաջողությամբ պաշտպանել են թեկնածուական ու դոկտորական ատենախոսություններ, և եղել է շատ լեզվաբանների, գրականագետների, պատմաբանների ընդդիմախոսը:

Հրաչ Բարթիկյանը շարունակում է իր եռանդուն, արգասաբեր գործունեությունը: Հայաստանի և Սփյուռքի գիտական ողջ մտավորականության անունից սիրով և խանդաղատանքով շնորհավորում ենք նրա փառապանծ հոբելյանը, մաղթում արևշատություն, սպասում նրա նոր գրքերին ու հոդվածներին: